

**ՀՀ Ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/6**

**28 հուլիսի 2015 թ.**

Քննարկվեց քաղաքացի Սեյրան Գալստյանի դիմումով բերված 02.07.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 20.05.2015 թ-ի թիվ 893 որոշման դեմ:

**Քաղաքացի Սեյրան Գալստյանի գանգատում բերված փաստարկները.**

2011 և 2012 թ.թ.-ի ընթացքում Սեյրան Գալստյանը (այսուհետ նաև գանգատաբեր) թեթև մարդատար մեքենայով զբաղվել է ուղևորափոխադրումով և հանդիսացել է պարտաճանաչ հարկատու:

2012թ.-ից գանգատաբերը աշխատել է արտոնագրով սակայն սոցիալական վճար չի մուծել, քանի որ իր մոտ այցելած ստուգողները հայտնել են, որ արտոնագրով աշխատելու դեպքում նա կարող է սոցիալական վճարը չմուծել:

2012թ.-ի սոցիալական վճարը չմուծելու համար 2015թ.-ին գանգատաբերին է ուղարկվել թիվ 893 որոշումը, որի համաձայն նա պարտավոր է մուծել սոցիալական ապահովության վճարների գծով 92.952 դրամ: Որքանո՞վ է ճիշտ սպասել երեք տարի, ավելացնել տոկոսները և նոր միայն հայտնել նշյալ գումարը մուծելու պարտավորության վերաբերյալ: Ինչու՞ չեն ուղարկել համապատասխան ծանուցագիր հենց 2012թ.-ի առաջին ամսում:

Գանգատաբերը հայտնում է նաև, որ ի վիճակի չէ մուծել վերը նշված գումարը, հետևապես խնդրում է հարցին տալ դրական լուծում:

**ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետը, քննարկելով Սեյրան Գալստյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 20.05.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված պարտավորությունները սոցիալական ապահովության վճարների գծով կազմում են 92.952 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի կողմից 20.05.2015 թ-ին ընդունվել է թիվ 893 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Սեյրան Գալստյանից 92.952 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ ներկայացուցիչը նշեց, որ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններն առաջացել են 2011 թ-ի օգոստոս ամսից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Սեյրան Գալստյանի կողմից նվազագույն սոցիալական վճարի գումարները սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Սեյրան Գալստյանին Հանձնաժողովի անդամների ուղված հարցին, թե ինչ է պատճառ հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գումարները չվճարելու համար, հնչեց պատասխան, որ դրա պատճառը եղել է իր տեղեկացված չլինելը: Մասնավորապես, իրեն տեղեկացրել են, որ արտոնագրային վճար վճարողները կարող են նվազագույն սոցիալական վճարի գումարներ չվճարել:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում, պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012թ.) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում չնայած նրան, որ Սեյրան Գալստյանինի կողմից 2012 թ-ին դիմում է ներկայացրել գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ, սակայն պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո ռ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 20.05.2015 թ-ի թիվ 893 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

